

Քննարկվեցին ընտանեկան բռնությունների հիմնախնդիրներին առնչվող հարցեր

Ապրիլի 3 -ին Կապանի մանկական կենտրոնում տեղի ունեցավ կլոր սեղան - քննարկում <<Ընտանեկան բռնությունների հիմնախնդիրներ>> թեմայով:

Կլոր սեղանին մասնակցում էին Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ա. Ոսկանյանը, ՀՀ Սյունիքի մարզի ոստիկանության Կապանի բաժնի անչափահասների գործերով զբաղվող ավագ տեսուչ Ջ. Վարդանյանը, Կապանի խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատության սոցիալական աշխատողները, Կապանի և Քաջարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամները:

Ներկայացվեցին <<PH international>> միջազգային կազմակերպության կողմից ֆինանսավորվող <<Ընդդեմ ընտանեկան բռնությունների>> ծրագրի ընթացքում անցկացված սոցիետազոտությունների արդյունքները: Նշվեց, որ Կապանում չկան աջակցության կենտրոններ, քննարկվեցին մասնավոր դեպքեր:

Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ա. Ոսկանյանը տեղեկացրեց, որ <<Կանանց իրավունքների կենտրոն>> հկ կողմից մայիսի 1-ից մարզում կգործի <<Թեժ գիծ>> ծառայությունը, որը կտրամադրի իրավաբանական և հոգեբանական աջակցություն:

